

Կ-1002⁴-06.05.2016-ՏՀ-010/2**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****ՕՐԵՆՔԸ****ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ****ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 107-րդ հոդվածի 7-րդ կետում «215-րդ հոդվածով» բառերը փոխարինել «215.1-ին հոդվածի 7-րդ մասով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 190-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը «235-249» թվերից հետո լրացնել «(բացառությամբ՝ 235.1-ին հոդվածի)» բառերով, իսկ «251-298» թվերից հետո լրացնել «(բացառությամբ՝ 267.1-ին հոդվածի)» բառերով:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188, 189, 193, 194, 202, 203, 205՝ բացառությամբ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործության, 207-211 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի կամ հարկային մարմինների քննիչները: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված՝ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները:».

3) 4-րդ մասում «215 հոդվածով նախատեսված հանցագործության» բառերը փոխարինել «215.1, 215.2, 235.1 և 267.1 հոդվածներով նախատեսված հանցագործությունների» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում «215-րդ հոդվածով» բառերը փոխարինել «215.1-ին հոդվածի 7-րդ մասով» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթացմամբ քննարկման ժամանակահատվածում ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացնել «, հայտարարագրեր» բառով:	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացվել է «, հայտարարագրեր» բառով:
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինել «ազգային անվտանգության» բառերով:	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինվել են «ազգային անվտանգության» բառերով: